թագաւորի օրով, որը ջերմ կողմնակից էր կրօնական հանդուրժողութեան, այդ դանդատները նոյնպէս, ըստ առաջնոյն, մնում էին անհետեւանք, որովհետեւ թէեւ թագաւորն անձամբ չէր պաշտպանում ջանքերը յօդուտ միութեան եւ նոյնիսկ պնդեց, որ հայերին յանձնելի «խուց»ը, այսինքն՝ հոգեւոր դատարանը եպիսկոպոսական աթոռին կից, բայց անզօր էր հակադրելու միութեան կուսակիցների դործունէութեան, մանաւանդ որ վերջիններիս ոյժ ու նեցուկ էր հանդիսանում, եւ այն էլ շատ եռանդուն կերպով, իր կինը՝ Մարիա-Լիւդովիկա թագուհին, որ մի կրօնամոլ սպանուհի էր: Բայց եւ այնպէս, պէտք է ընդունել որ Վլադիսլաւի թագաւորութիւնը կրօնական տեսակէտից հայերի համար աւելի մեղմ էր, քան Սիգիզմունդինը:

Պապին ուղարկուող միամիտ դանդատները եւ պատուիրակութիւնները ինքնին արդէն դատապարտուած էին անյաջողութեան, քանի որ պապը ամենից աւելի շահագրգռուած անձն էր, որ ձգտում էր իր իշխանութեան ենթարկել նաեւ հայկական եկեղեցին, եւ ամէն ինչ, որ Լեհաստանում տեղի էր ունենում հայերի նկատմամբ, կատարւում էր հէնց պապի դիտութեամբ եւ ցուցմունքներով:

Լվովի հայերին մնացել էր միայն վերջին ապաւէնը — ultimum refugium — Էջմիածնի կաթուղիկոսը: Նրան ուղղուեցին ապարախտ հօտի դանդատներն ու ճիչերը, նրա մօտ ուղարկւում էին պատգամաւորներ՝ օգնութեան աղերսագին աղաղակներով: Եւ Էջմիածինը, հակառակ որ ինքն էլ զոհ էր Հայաստանի հողի վրայ տեղի ունեցող թիւրք-պարսկական անվերջ պատերազմների եւ դեռ նոր էր ենթարկուել աւերի ու քայքայման Շահ Աբասի կողմից, չէր կարող անտարբեր մնալ լեհահայ ժողովրդին վիճակուած դժբախտութեան հանդէպ:

Մովսէս եւ Փիլիպպոս կաթուղիկոսները հերթով նուիրակներ ուղարկեցին Լեհաստանի հայերի մօտ, կոնդակներ գրեցին, աշխատեցին վառ պահել նրանց մէջ Հայաստանեայց եկեղեցու աւանդութիւնները: Լաւագոյն բախտի արժանի եռանդով՝ աղերսարկու թղթեր էին գրում լեհական Սիգիզմունդ եւ Վլադիսլաւ թագաւորներին, գրում էին պապերին՝ դիմում անելով նրանց բարեսրտութեան եւ աշխատում էին շարժել նրանց գութը դէպի դժբախտ հայ ժողովուրդը: Բայց որքան կաթուղիկոսների ճիգերը բարեյաջող արդիւնք էին տալիս լեհահայերի մէջ, նոյնքան անպտուղ էին անցնում Լեհաստանի թագաւորների եւ Հռովմի աթոռի մօտ*):

Հայոց կաթուղիկոսը, իր համոզումով, իր կողմը քաշեց կաթոլիկ նշանաւոր միսիոնար Հ. Պողոս Պիրոմալլին, որ Հայաստանի կաթոլիկ առաքելութեան պետն էր եւ Մովսէս կաթուղիկոսի հիմնած Էջմիածնի բարձրագոյն աստուածաբանական դպրոցում աստուածաբանական առարկաներ, լատիներէն ու ասորերէն լեզուներն էր դասաւանդում:

Այդ նպատակով Պիրոմալլին ճամբորդեց առաջ Հռովմ պապի մօտ, ապա՝ Լվով, բայց յաջողութիւն չունեցաւ: Այն էլ պէտք է ասել, որ նա ո՛չ թէ պապին էր համոզում՝ հաշտուել հայերի հետ, այլ հայերին՝ ընդունել կաթոլիկ դաւանանք ու միանալ հռովմէական եկեղեցուն**):

Պիրոմալլի աշակերտներից էր եւ հռչակաւոր վարդապետ, ապա եպիսկոպոս Ոսկանը, որը տուեց Աստուածաշնչի առանձին հայերէն հրատարակութիւնը Ամսթերտամում, 1666 թ.:

*) Հայր Ալիշանի «Կամենեց» ժողովածուում առաջ են բերուած կոթուղիկոսական վեց թղթեր՝ գրուած թէ՛ լեհական թագաւորներին, թէ՛ Հռովմի պապին եւ թէ՛ լեհահայ համայնքին: Այդ թղթերը լիքն են խորունկ զգացումով, մտքով եւ հանդուրժողութեամբ: Իսկ Զախարիասեւիչ եպիսկոպոսը ("Wiadomosc O Ormianach w Polsce") տալիս է լեհերէն թարգմանութիւնը լեհահայերի 1631 թ. Յուլ. 21-ին, Մովսէս կաթուղիկոսին ուղղած վերին աստիճանի յուզիչ դանդատագրի, որի հայերէնը կցում ենք սոյն յօդուածին:

**) Համեմ. Ստեփաննոս Ռօշկա, իր ժամանակագրութեան մէջ՝

«... Առաքեն զնոյն Պատրին (Հայր Պողոս Բիրոմալլի) առ Ուրպանոս փափն յայսմ ամի (1539) Աւլիսին, թերեւս հրամայեսցէ արքեպիսկոպոսին թոյլ տալ նոցա մնալ յառաջին կրօնն: